

ՔՐԻԱՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
ՁԵՌՆԱՐԿԸ ՍԱՆ ՏԻԷԿՈՅԻ ՍՈՒՐԲ ՅՈՎՅԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ  
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷԶ

Շաբաթ, Փետրուար 27ին Արեւմտեան Թեմի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի Մեծ Պահքի կապակցութեամբ «Շնորհքով Շաղախուած» խորագրի տակ ձեռնարկը տեղի ունեցաւ Սան Տիէկոյի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ մէջ:

Ձեռնարկին մասնակցեցան շուրջ 25 մանուկներ եւ պատանիներ: Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տաթև Աւագ Քինյ. Թաթուլեան անոնց աղօթքներ սորվեցուց եւ բացատրեց Սուրբ Հաղորդութեան Խորհուրդը եւ Կիրակնօրեայ Վարժարանի սաներուն հետ միասին պատրաստեց նշխարներ, որոնք բաժնուեցան ներկաներուն: Սոյն ձեռնարկին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Եկեղեցւոյ Սարկաւազները: